

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**

2017 թ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐ

ԳԼՈՒԽ 1.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿՈՄԻՏԵԻ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ**

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգումը			
Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր
01	06	01	09
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություննե ր (այլ դասերին չպատկանող)	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	

I. Ծրագրի իրականացման նպատակը

1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի համակարգի տարեկան ծախսերը պլանավորվում ու իրականացվում են սպասվելիք տարեկան եկամուտների չափով և հաստատվում «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի առանձին հավելվածով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) 2017 թվականի տարեկան ծախսերը պլանավորվել են 3898537,3 հազար դրամի չափով, որը նախատեսվում է իրականացնել կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների կողմից պետական գրանցման, գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար գանձվելիք վճարների հաշվին:

3. Ստացված եկամուտների հաշվին կիրականացվեն ծախսեր հետևյալ ուղղություններով՝

1) «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ»- նախատեսված է իրականացնել 2568367,5 հազար դրամի ծախս, որը հաշվարկվել է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներին համաձայն:

2) «Շարունակական ծախսեր» բաժնով կոմիտեի գործունեության իրականացման համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի և վառելիքի օգտագործման համար ծախսերը պլանավորվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 629-Ն որոշմամբ

հաստատված N 1,2,3 հավելվածներով սահմանված չափաքանակներով: Էներգետիկ ծառայությունների գումարը մեկ տարվա համար կազմում է 86016,7 հազար դրամ: Հաշվարկների ժամանակ հաշվի է առնվել տարածքային ստորաբաժանումների և սպասարկման գրասենյակների գոտիականությունը և բյուջետային նորմաները:

3) <<Կոմունալ ծառայությունների վճար>> 4213 հոդվածով կոմունալ ծառայություններից օգտվելու համար 2017 թվականին պլանավորվում է իրականացնել 1619,2 հազար դրամի ծախս: Զրի ծախսի հաշվարկը կատարվել է ըստ նորմատիվի՝ 1 աշխատողին տարեկան 8 խոր. լիտր ջուր, իսկ դեռատիզացիայի ծախսը սահմանված է դեռատիզացիայի պայմանագրերով:

4) <<Կապի ծառայությունների վճար>> 4214 հոդվածով կապի ծառայություններից օգտվելու համար 2017 թվականին պլանավորվում է իրականացնել 21000.0 հազար դրամի ծախս: Հաշվարկները իրականացվել են հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1956-Ն որոշմամբ հաստատված չափաքանակները:

5) <<Ապահովագրական ծախսեր>> 4215 հոդվածով պլանավորվել է 2200.0 հազար դրամի ծախս կոմիտեի համակարգի ծառայողական ավտոմեքենաների ապահովագրության համար:

6) <<Գույքի և սարքավորումների վարձակալության>> 4216 հաղվածով ծախսերը նախատեսված են համաձայն կոմիտեի աշխատակազմի կողմից կնքված տարածքների վարձակալության պայմանագրերի, որոնց ընդհանուր գումարը կազմում է 57180,1 հազար դրամ:

7) <<Արտագերատեսչական ծախսեր>> 4217 հոդվածով՝ կոմիտեի կողմից կնքված արտագերատեսչական պահպանության պայմանագրային գումարը կազմում է 35490.0 հազար դրամ:

8) <<Գործուղումներ և շրջագայության ծախսեր>> 2017 թվականին պլանավորվում են գործուղումներ ինչպես հանրապետության ներսում, այնպես էլ հանրապետությունից դուրս, որոնց գծով նախատեսվում է իրականացնել համապատասխանաբար 4221 հաղվածով 9 000.0 և 4222 հաղվածով 3000.0 հազար դրամի ծախս: Կատարված հաշվարկները իրականացվել են Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների գործուղումների համար սահմանված նորմաների հիման վրա:

9) Պայմանագրային ծառայությունների ձեռք բերման ծախսերը ներառում են՝ <<Վարչական ծառայություններ>> 4231 հոդվածով՝ 500.0 հազար դրամ, <<Տեղեկատվական ծառայություններ>> 4234 հոդվածով 6000.0 հազար դրամ, <<Ներկայացուցչական ծախսեր>> 4237 հոդվածով կոմիտեն համագործակցում է մի շարք երկրների և միջազգային կազմակերպությունների հետ, որի համար անհրաժեշտ է 2 000.0 հազար դրամ, <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> 4239 հոդվածով 22000.0 հազար դրամ:

10) <<Մասնագիտական ծառայություններ>> 4241 հոդվածով նախատեսվել է 83000.0 հազար դրամ գումար՝ գերատեսչական ցանցի սպասարկման աշխատանքների, << կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադատորի պետական կոմիտեում ներդրված էլեկտրոնային համակարգերի, համակարգչային սերվերների ծրագրային սպասարկման և պահպանման ծառայությունների, «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային համակարգի և << կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադատորի կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման, www.e-cadastre.am կայքի սպասարկման ծառայությունների, գազի սպասարկման, ծխատարի տեղադրման և մաքրման ծառայությունների, պետական գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման համար, ինչպես նաև կրթական կենտրոնի գործարկման համար:

11) <<Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում>> 4252 հոդվածով ծախսերը նախատեսվել են 25000.0 հազար դրամ:

12) <<Գրասենյակային նյութեր և հագուստ>> 4261 հոդվածով ձեռքբերում 2017 թվականին նախատեսվում է կատարել 20000.0 հազար դրամի ծախս, <<Տրանսպորտային նյութեր>> 4264 հոդվածով՝ 50597.3 հազար դրամ, <<Կենցաղային և հանրային սննդի նյութեր>> 4267 հոդվածով 3 000.0 հազար դրամ:

13) <<Պարտադիր վճարներ>> 4823 հոդվածով 3421.7 հազար դրամ, աղբահանության (համաձայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված նորմաների և պայմանագրերի) տեխնիկական-բնապահպանության և այլ ծախսեր:

14) <<Այլ ծախսեր>> 4861 հոդվածով 473 537.3 հազ. դրամ:

15) Սեփականատերերին և օգտագործողներին պատճառված հնարավոր վնասների փոխհատուցման նպատակով նախատեսվել է 5 000.0 հազ. դրամ <<Պահուստային միջոցներ>>: 4891 հոդվածով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ
ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿՈՄԻՏԵԻ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգումը			
Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր
01	06	01	12
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	

16) <<Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր>> 5133 հոդվածով՝ 420 607.5 հազար դրամի ծախս:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի գծով իրականացվող ծախսեր

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ընդհանուր գումարը
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	3898537.3
այդ թվում՝	
Ա. ԸՆԹԱՅԻԿ ԾԱԽՍԵՐ	3477929.8
այդ թվում՝	
1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ	2568367.5
այդ թվում՝	
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	2568367.5
այդ թվում՝	
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	2159544.1
Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	247940.2
Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում	160883.2
2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	427603.3
2.1 ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	203506.0
Էներգետիկ ծառայություններ	86016.7
Կոմունալ ծառայություններ	1619.2
Կապի ծառայություններ	21000.0
Ապահովագրական ծախսեր	2200.0
Գույքի և սարքավորումների վարձակալություն	57180.1
Արտագերատեսչական ծախսեր	35490.0
2.2 ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ	12000.0
այդ թվում՝	
Ներքին գործուղումներ	9000.0
Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	3000.0
2.3 ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ	30500.0
Վարչական ծառայություններ	500.0
Տեղեկատվական ծառայություններ	6000.0
Ներկայացուցչական ծախսեր	2000.0
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	22000.0
2.4 ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ	83000.0
Մասնագիտական ծառայություններ	83000.0

2.5 ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր)	25000.0
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	-
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	25000.0
2.6 ՆՅՈՒԹԵՐ	73597.3
Գրասենյակային նյութեր և հագուստ	20000.0
Տրանսպորտային նյութեր	50597.3
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	3000.0
7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	481959.0
7.2 ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՒՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՍՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ	3421.7
Պարտադիր վճարներ	3421.7
7.6 Այլ ծախսեր	473537.3
Այլ ծախսեր	473537.3
7.7 ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ	5000.0
Պահուստային միջոցներ	5000.0
Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	420607.5
<i>Հիմնական միջոցներ այդ թվում՝</i>	420607.5
<i>Այլ հիմնական միջոցներ այդ թվում՝</i>	420607.5
Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր	420607.5

ԳԼՈՒԽ 2.

2017 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՈՂԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ընդհանուր դրույթներ

5. 2017 թվականի գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառի զարգացման նպատակով նախատեսվում է աշխատանքներ իրականացնել գեոդեզիական, տեղագրական և թեմատիկ քարտեզագրության, երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի ստեղծման և աշխարհագրական անվանումների ուղղություններով:

6. Գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառը նպատակաուղղված է ապահովելու պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին, տնտեսությանը, պաշտպանությանը, գիտությանը, կրթությանը և բնակչությանը ժամանակակից քարտեզագրագեոդեզիական նյութերով:

**I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84)
/ArmREF02/ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՈՂԵԶԻԱԿԱՆ ԿՈՌՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
ՔՎԱԶԻԳԵՈՒԴԻ ՄՈՂԵԼԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

1. Քվազիգեոիդի մոդելի ստեղծման աշխատանքներ

7. Տարբեր տեղագրագեոդեզիական, քարտեզագրական, հետախուզական, նախագծային, շինարարական և այլ աշխատանքներ իրականացնելու համար GPS դիտարկումներից ստացված WGS-84 համաշխարհային համակարգում գեոդեզիական կոորդինատները Հելմերտի բանաձևի միջոցով վերահաշվարկվում է լոկալ տեղական հարթ ուղղանկյուն կոորդինատային համակարգում, ապահովելով բարձր ճշտություն:

8. Սակայն GPS դիտարկումներից ստացված «գեոդեզիական» բարձրությունից անցումը «նորմալ» բարձունքային նիշերի /1977թ. Բալթյան համակարգ/ չի ապահովում բարձր ճշտություն, քանի որ դա կապված է ոչ միայն հաշվարկային բանաձևերից, այլ նաև Երկրագնդի տվյալ շրջանի գրավիտացիոն դաշտից: Երկրագնդի մարմնում զանգվածների ոչ համաչափ տեղաբաշխման հետևանքով, ծանրության ուժը փոփոխվում է նրա մակերևույթի վրա ոչ օրինաչափ ձևով:

9. Այդ խնդիրը լուծելու համար «նորմալ» բարձրությունները հաշվարկվում են տարածքի քվազիգեոիդի թվային մոդելից ստացված ուղղումների օգնությամբ, որոնք արտահայտում են երկրագնդի գրավիտացիոն դաշտի բարդ բնութագիրը: Մոդելը պետք է կառուցել ՀՀ տարածքում իրականացված GPS դիտարկումներից ստացված 400 կետերի «գեոդեզիական» և նույն կետերի I և II դասի նիվելիրացման աշխատանքներից ստացված «նորմալ» բարձունքային նիշերի համադրման, խորը վերլուծությունների, ինչպես նաև բարդ հաշվարկների միջոցով: Սակայն ՀՀ լեռնային շրջաններում, որտեղ նման տվյալները բացակայում են, մոդելը հաշվարկված է ինտերպոլացիոն և էքստրապոլացիոն եղանակներով, ինչը չի բավարարում ժամանակակից պահանջներին:

10. Սույն ծրագրով ՀՀ տարածքի որոշ բարձրադիր շրջաններում նախատեսվում է իրականացնել GPS դիտարկումներ, II դասի նիվելիրացման աշխատանքներ: Արդյունքում կստանանք քվազիգեոիդի ճշգրտված թվային մոդելը, որը կնպաստի բարձրացնելու ՀՀ տարածքում տեղադրված իրական ժամանակում մշտական գործող ռեֆերենց կայանների ձևափոխվող՝ տրանսֆորմացիոն պարամետրերի ճշգրտման մակարդակը, որն էլ կապահովի “ՌՈՎԵՐ” դիտարկման GPS կայաններից անմիջապես ստանալու կետի տեղադիրքի կոորդինատները ArmWGS-84/ArmREF02/ համակարգում:

2. Աշխատանքների իրականացման նպատակը

11. Սույն ծրագրով ՀՀ տարածքի որոշ բարձրադիր շրջաններում նախատեսվում է իրականացնել GPS դիտարկումներ, II դասի նիվելիրացման աշխատանքներ: Արդյունքում կստանանք քվազիգեոիդի ճշգրտված թվային մոդելը, որը կապահովի GPS դիտարկումներից ստացված ‘գեոդեզիական’ բարձրությունից անցումը «նորմալ» բարձունքային նիշերի՝ բարձր ճշտությամբ, հնարավորություն տալով խնայել ժամանակ և ֆինանսական միջոցներ:

3. Աշխատանքների իրականացման միջոցառումները

12. Քվազիգեոիդի մոդելի ստեղծման աշխատանքների ավարտից հետո արդեն հայտնի 400 ելակետերով կստանանք հաշվարկված ինտերպոլացիոն և էքստրապոլացիոն եղանակներով ստացված տրանսֆորմացիոն նոր գործակիցներ (**Dx, Dy, Dz, wx, wy, wz և So**):

II դասի նիվելիրացման աշխատանքներ:

- Քվազիգեոիդի ճշգրտված թվային մոդելը, որը կապահովի GPS դիտարկումների «գեոդեզիական» կորրեկցիաներից անցում այլ էլիպսոիդային և «նորմալ» բարձունքային նիշերի՝ (ակնկալվում է ստանալ պլանային և բարձունքային դիրքի կորրեկցիաների մինչև (40 մմ ճշտության ձևափոխում):

4. Աշխատանքների իրականացումից ակնկալվող արդյունքները

13. Ծրագրի իրականացումից հետո ակնկալվում է ունենալ՝

- GPS 156 հիմնակետերի դիտարկում և կորրեկցիաների հավասարակշռում ու հաշվարկում,
- II դասի 113.0 գծ.կմ նիվելիրացում,
- II դասի 113.0 գծ.կմ նիվելիրացման նյութերի մշակում և 30 կետերի հավասարակշռում:

5. Ծրագրի իրականացման ֆինանսական ապահովումը և ժամանակացույցը

14. Ծրագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության տարածքում WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) /ArmREF02/ ազգային գեոդեզիական կորրեկցիանային համակարգում քվազիգեոիդի մոդելի ստեղծման աշխատանքներ նախատեսված աշխատանքներն ու ծախսերի նախահաշիվը տրված է աղյուսակ 1-ում:

Ժամանակացույց

**2017 թվականին քվազիգեոիդի մոդելի ստեղծման բնագավառում նախատեսվող աշխատանքների
աղյուսակ 1**

Հ / Հ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը /դրամ/	Գումարը /հազ.դրամ/	I եռամսյակ		Կիսամյակ		9 ամիս		Տարի	
						ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	GPS կետերի դիտարկում	կետ	156	78,837.0	12,298.6			30	2,365.1	105	8,277.9	156	12,298.6
2	GPS կետերի կոորդինատների հաշվարկում և հավասարակշռում	կետ	156	5,034.0	785.3							156	785.3
3	II դասի նիվելիրացում	զծ. կմ	113	139,501.0	15,763.6			20.0	2,790.0	80.00	11,160.1	113	15,763.6
4	II դասի նիվելիրացման նյութերի մշակում	զծ. կմ	113	1,910.0	215.8							113	215.8
5	II դասի նիվելիրացման նյութերի հավասարակշռում	10 կետ	3	1,753.0	5.3							3	5.3
	Ընդամենը				29,068.6				5,155.1		19,438.0		29,068.6

II. ՀՀ ԲԱԶԱՅԻՆ ԵՐԿՐԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՔԻ ՍՏԵՂԾՈՒՄ

1. Բնագավառի նկարագրությունը և հիմնական խնդիրները

15. Հայաստանի Հանրապետության երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի իրականացման ծրագիրը մշակվել է «Հայաստանի Հանրապետության գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի N197-Ն որոշմամբ հաստատված երկրատեղեկատվական համակարգի ստեղծման և վարման հայեցակարգի պահանջներից ելնելով:

16. Այս ուղղությամբ 2005-2012 թվականներին Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում իրականացվել են բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքներ, որոնց հիմնական նպատակն աշխարհագրական անվանումների, հողային ֆոնդի, անշարժ գույքի նպատակային, գործառնական նշանակության, հողատեսքերի, ջրագրության, ռելիեֆի, գծային ենթակառուցվածքների օբյեկտների մասին քարտեզագրական և տեքստային տվյալների տեղեկատվական բանկի ստեղծումն ու կառավարումն էր: 2016 թվականին ավարտվել են Գյումրի քաղաքի բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքները:

17. Պետական մակարդակով երկրատեղեկատվական համակարգերի ստեղծումը և ներդրումը թույլ կտա բացառել ոչ բավարար հիմնավորում ունեցող որոշումների ընդունումը և անցնել պետական կառավարման որակապես նոր մակարդակի:

18. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառում ժամանակակից երկրատեղեկատվական համակարգի օգտագործումը կնպաստի՝

19. Հայաստանի Հանրապետության մարզերի և համայնքների տնտեսական ծրագրերի արդյունավետ մշակմանը,

1) կառավարման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման և մշակման ստանդարտացման աստիճանի բարձրացմանը,

2) տնտեսության տարբեր ոլորտներում օգտագործվող տարածական տեղեկատվության անհարկի կրկնօրինակման և տվյալների հակասականության բացառմանը,

3) տարածական տվյալների ստեղծման գործընթացի հեշտացմանը, օպերատիվության բարձրացմանը և ծախսերի նվազեցմանը,

4) տարածական տվյալների մատչելիության ապահովմանը,

5) հանրության համար տեղեկատվության հասանելիության ապահովմանը,

6) տվյալների ամբողջականության, հավաստիության, ճշտության ստուգման ներքին մեխանիզմների մշակմանը,

7) տարածական տվյալների արդիականության և անընդհատության ապահովմանը:

20. Երկրատեղեկատվական համակարգի (ԵՏՀ) ստեղծումը աշխարհագրական բոլոր տեսակի կապակցված տեղեկատվության ներդրումն է, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր օբյեկտակողմնորոշիչ հանգամաքում տալ օպերատիվ լուծումներ և դրանով ստանալ անհրաժեշտ քարտեզագրական և թեմատիկ տեղեկատվություն:

21. ԵՏ տվյալների թեմատիկ բանկի առկայությունը պայմանավորված է քաղաքացիների, կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հավաստի, օպերատիվ ու արդիական տարածական տվյալների սպառման պահանջներով:

22. 2013 թվականին սկսվել են Գյումրի քաղաքի բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքները 817 հա տարածքի վրա, 2014թ իրականացվել է 820 հա, 2015 թվականին կատարվել է 1396,1 հա, իսկ 2016 թվականին՝ 1396,1 հա:

2 Աշխատանքների իրականացման նպատակը

23. Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից պահանջներին բավարարող բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծումն է, որն անհրաժեշտ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին տնտեսության տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման, հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների վերաբերյալ տվյալների (ինչպես քարտեզագրական, այնպես էլ տեքստային) պետական միասնական տեղեկատվական բանկի ստեղծման և հանրապետության ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման համար:

24. Հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է ունենալ հավաստի և ամբողջական տեղեկատվություն ՀՀ և նրա առանձին վարչատարածքային միավորների տնտեսության վիճակի ու բնական ռեսուրսների վերաբերյալ, այդ թվում հողային, ջրային, անտառային ռեսուրսների, օգտակար հանածոների, տնտեսական զարգացման, արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկությունների, անշարժ գույքի, բնակչության տեղաբաշխման, ճանապարհային ցանցի ու ենթակառուցվածքների այլ տարրերի, էկոլոգիական վիճակի մասին:

3. Աշխատանքների իրականացման միջոցառումները

25. Բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքները ժամանակակից տեխնոլոգիական պահանջներին համապատասխան ստեղծելու և ներդնելու նպատակով 2017թ. նախատեսվում է իրականացնել Վանաձոր քաղաքի - 2599,3 հա համար ԵՏՀ աշխատանքները:

26. Հայաստանի Հանրապետության բազային երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի ստեղծման նպատակով իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝

1. քարտեզագրվող տարածքների օրթոֆոտոհատակագծերի ստեղծում, որոնց շնորհիվ աշխատանքները կիրականացվեն առավել արդյունավետ,
2. նշված տարածքների համար 1:2000 մասշտաբի տեղագրական թվային արդիական իրավիճակով և ռելիեֆով հատակագծերի ստեղծում,
3. ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների հանութագրում և համաձայնեցում շահագործող կազմակերպությունների հետ,
4. բազային երկրատեղեկատվական համակարգի համար անհրաժեշտ շերտերի և տեքստային տվյալների ստեղծում և մուտքագրում տվյալների բազա:

4. Աշխատանքների իրականացումից ակնկալվող արդյունքները

27. Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք Հայաստանի Հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքային համայնքների համար

ստեղծված բազային ԵՏՀ տեղեկատվական բանկ, որը հիմք կհանդիսանա գերատեսչական տարբեր ոլորտների, այդ թվում քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերական, անշարժ գույքի կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, գույքահարկի և գնահատման բազաների ճշգրտման, վարչական և տնտեսական գործունեության, մելիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառտնտեսության, արտակարգ իրավիճակների ժամանակ օպտիմալ և օպերատիվ որոշումների կայացման, հանրապետության մարզերի, համայնքների և առանձին տարածքների զարգացման, օպտիմալ պլանավորման և այլ ոլորտների խնդիրների լուծման համար:

5. Աշխատանքների իրականացման ֆինանսական ապահովումը և ժամանակացույցը

28. 2017 թվականին նախատեսվող ՀՀ բազային երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հինքի ստեղծման նախատեսվող աշխատանքների ծախսերի նախահաշիվն ըստ ծավալների տրված է աղյուսակ 2-ում:

Ժամանակացույց

ՀՀ բազային երկրատեղեկատվական համակարգի 2017 թվականին նախատեսվող աշխատանքների

աղյուսակ 2

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը /դրամ/	Գումարը /հազ.դրամ/	I եռամսյակ		Կիսամյակ		9 ամիս		Տարի	
						ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Տեխնիկական նախագծի կազմում, Վանաձոր - 2599.3 հա,	նախագիծ	1	823,330	823.3	1	823.3	1	823.3	1	823.3	1	823.3
2	Ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների և ելքերի դիտահորերի տեղազննում և հանութագրում կառուցապատված տարածքներում 1հա համար - 2 դիտահոր /ելք/	հա x դիտահոր /ելք/	5,198.6	3,938.5	20,474.7	400	1,575.4	2200	8,664.7	4,000.0	15,754.0	5,198.6	20,474.7
3	Դիտահորերի տարրերի չափագրում, հավաքագրում, ուրվանկարների կազմում և ամփոփագրի կազմում խիտ կառուցապատված տարածքներում 1 հա համար - 2 դիտահոր /ելք/	հա x դիտահոր /ելք/	5,198.6	1,451.1	7,543.7	400	580.4	2200	3,192.4	4,000.0	5,804.4	5,198.6	7,543.7
4	Ստորգետնյա	%		8.0	2,241.5		0.0		0.0		0.0		2,241.5

	մայրուղային հաղորդակցուղիների համաձայնեցում շահագործող կազմակերպությունների հետ												
5	Բազային երկրատեղեկատվական համակարգի համար անհրաժեշտ շերտերի ստեղծում, դասակարգում և միաբերում	հա x շերտ	41,588.8	343.2	14,273.3	3200	1,098.2	17600	6,040.3	32000	10,982.4	41,588.8	14,273.3
6	Բազային երկրատեղեկատվական համակարգի համար տվյալների հավաքագրում և ներմուծում տվյալների բազա	տարր	181,951.0	173.2	31,513.9	14000	2,424.8	77000	13,336.4	140000	24,248.0	181,951.0	31,513.9
7	Տեխնիկական հաշվետվության կազմում	հաշվետվ	1	596,323	596.3		0.0		0.0		0.0	1	596.3
	Ընդամենը				77,466.7		6,502.2		32,057.2		57,612.1		77,466.7

III. ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Վ տարածքի օդալուսանկարահանման նյութերի հիման վրա քաղաքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի ստեղծում

1. Բնագավառի նկարագրությունը և հիմնական խնդիրները

29. Տեղագրական քարտեզագրության բնագավառում պետական մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների ստեղծման և թարմացման նպատակով աշխատանքներն իրականացվելու են «Վ կառավարության 19.09.2002թվականի «Վ պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների ստեղծման և օդալուսանկարահանման աշխատանքների իրականացման ծրագիրը հաստատելու մասին» N1565-Ն որոշման և «Վ կառավարության համապատասխան որոշումների շրջանակներում:

30. «Վ պետական մասշտաբային շարքի քարտեզները հիմք են հանդիսանում գերատեսչական տարբեր ոլորտների /քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերության, կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, վարչական և տնտեսական գործունեության, մելիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառտնտեսության և այլն/ խնդիրների լուծման նպատակով ստեղծվելիք քարտեզագրական նյութերի համար:

31. Տեղագրական նկարահանման աշխատանքների իրականացման նպատակով 2008 թվականին ռուսական կազմակերպության հետ կնքված պայմանագրի շրջանակներում ձեռք է բերվել երկրի հեռահար զոնդավորման տվյալների ընդունիչ կայանը՝ համապատասխան սարքավորումներով և ծրագրային ապահովմամբ: Տեղագրական ընդունիչ կայանի միջոցով ստացված նյութերի հիման վրա 2009-12 թվականներին կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացվել են «Վ պետական մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների թարմացման աշխատանքները:

32. Սակայն 2010 թվականի հուլիս ամսվանից անսարքության պատճառով խափանվել է ռուսական „РЕСУРС-ДК” նկարահանող արբանյակը և այդ իսկ պատճառով 2013-14 թթ. թարմացման աշխատանքները շարունակվել են իրականացվել վերգետնյա չափագրման եղանակով: Այսօր գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտների առջև ծառայել են նոր մարտահրավերներ և խնդիրներ, որոնք պահանջում են նոր մոտեցումներ ոչ միայն կարճաժամկետ, այլ նաև երկարաժամկետ հեռանկարային ծրագրերի հետագա զարգացման համար: Նորվեգական դրամաշնորհով 2014 թվականին նախատեսվել և իրականացվել է «Վ տարածքի օդալուսանկարահանում 10 քրտ թույլտրելիությամբ Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների համար և մնացած քաղաքների ու բնակավայրերի հարակից տարածքների համար՝ 20 քրտ թույլտրելիությամբ 1:2000 մասշտաբի օրթոֆոտոհատակագծերի ստեղծման նպատակով:

33. Ստացված ստերեո օդալուսանկարները տեղանքում որևէ կորոդինատային համակարգում տարածության մեջ կապակցելու նպատակով օդալուսանկարների ֆոտոեռանկյունավորման նախագծված ցանցում ստեղծվել է տեղանքին համապատասխան տեղադիրքի դաշտային կապակցված կետեր՝ ճանաչման կետեր:

34. Ճանաչման կետերը դիտարկվել և չափագրվել են տեղանքում գտնվող կետային կամ մակերեսային, ինչպես նաև գծային առարկաների հատկանշական

կետային համարվող տեղադիրքերի նկատմամբ, որոնք առավելագույնս պարզ են արտացոլված լուսանկարային պատկերներում:

35. Կողմնորոշիչ կետերի ճանաչումը դիտարկվել և որոշվել է կամ պլանային դեղադիրքով, կամ ըստ բարձրությամբ: Սակայն առավել նպատակահարմար է կողմնորոշիչի եռաչափ տեղադիրքի՝ պլանաբարձունքային կոորդինատների ստացումը:

36. Դիտարկումից հետո կողմնորաշիչները տեղանքում ամրացվել, նշահարվել, լուսանկարվել և ներկվել են բարձրությունից լավ երևացող սպիտակ կամ կարմիր գույնի ներկերով:

37. Աշխատանքների հիմնական նպատակն է հանդիսանում «ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի N 791-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 21-ի N 763-Ն որոշման համաձայն WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում մեկ միասնական քարտեզագրական հիմքի ընդունումը հանրապետությունում բազային հանդիսացող 1:10000 մասշտաբի տեղագրական օրթոֆոտոհատակագծերի, քարտեզների, ինչպես նաև այն խոշոր քաղաքների համար, որոնք ունեն 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծեր:

38. 1:2000 մասշտաբի ստեղծված օրթոֆոտոհատակագծերը հետագա աշխատանքների իրականացման արդյունքում հիմք կհանդիսանան տեղագրական հատակագծեր կազմելու համար: Տեղագրական քարտեզները նախատեսված են երկրի առջև ծառայած տարաբնույթ խնդիրների լուծման համար, որոնք ստեղծվում են միասնական կոորդինատային և բարձունքային համակարգերում և կազմվում են տեխնիկական պահանջների և սահմանված տեղեկատվության հիման վրա՝ միաժամանակ արտացոլելով տեղանքի պատկերը տվյալ ժամանակահատվածում:

39. Ստեղծվող թվային բազային քարտեզները հիմք են հանդիսանում տարբեր գերատեսչական (քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերության, կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, վարչական և տնտեսական գործունեության, մելիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառտնտեսության և այլն) խնդիրների լուծման նպատակով թեմատիկ քարտեզների ստեղծմանը:

40. 2017 թվականին սույն ծրագրով նախատեսվում է իրականացնել Սպիտակ քաղաքի 744.51 հա և Սևան քաղաքի 1160.0 հա 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի ստեղծման աշխատանքները:

2. Աշխատանքների իրականացման նպատակը

41. Աշխատանքների հիմնական նպատակը Ձեռք բերել և պահպանել Հայաստանի Հանրապետության վերը նշված տարածքների օդալուսանկարներն իրենց օրթոֆոտոհատակագծերով և պահպանել այդ տարածքների թվային տեղագրական քարտեզներն արդիական վիճակում, պարբերաբար թարմացնելով այն:

42. 2010-2014 թվականներին իրականացվեցին ՀՀ մարզերի՝ համայնքների վարչական սահմանների նկարագրման և ամրացման աշխատանքները: Այդ առումով անհրաժեշտություն է առաջացել ճշգրտված 102 համայնքի վարչական սահմաններն անցկացնել տեղագրական քարտեզների վրա՝ որպես քարտեզագրական կարևորագույն տարր: Անհրաժեշտ է իրականացնել նաև ՀՀ մարզերի վարչական սահմանների տեղադրում և ճշգրտում մասշտաբային շարքի 1:10 000 և 1:25 000 մասշտաբի տեղագրական քարտեզների վրա ըստ նկարագրի:

43. Միաժամանակ անհրաժեշտ է ՀՀ ամբողջ տարածքի թվային քարտեզները տեղափոխել ArcGis ծրագրային փաթեթ, հետագայում գլոբալ և կարևորագույն խնդիրներ լուծելու համար, այն է՝ ՀՀ տարածքի, այդ թվում բնակավայրերի ԵՏՀ ստեղծում, նավիգացիոն համակարգի ներդնում, ռելիեֆի եռաչափ մոդելների կառուցում և այլն:

3. Աշխատանքների իրականացման միջոցառումները

44. 2017 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել նոր օդալուսանկարների հիման վրա Սպիտակ քաղաքի 744.51 հա և Սևան քաղաքի 1160,0 հա 1:2000 մ-բի հատակագծերի ստեղծում:

2017 թվականի ընթացքում ՀՀ 1:10000 և 1:25000 մասշտաբների 300 թերթից բաղկացած տեղագրական քարտեզներից 300-ը Microstation ծրագրային փաթեթից պետք է տեղափոխել ArcGis ծրագրային փաթեթ:

4. Աշխատանքների իրականացումից ակնկալվող արդյունքները

45. Այս աշխատանքների իրականացման արդյունքում 2017 թվականին նախատեսվում է ունենալ՝

- տեխնիկական նախագիծ,
 - 1) Սպիտակ քաղաքի 744.51 հա տարածքի 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծեր,
 - 2) Սևան քաղաքի 1160,0 հա տարածքի 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծեր,
 - 3) ՀՀ 1:10 000 և 1:25 000 մասշտաբի տեղագրական 300 թերթ էլեկտրոնային քարտեզների տեղափոխում ԵՏՀ միջավայր ArcGis ծրագրային փաթեթում,
 - 4) տեխնիկական հաշվետվություններ:

5. Աշխատանքների իրականացման ֆինանսական ապահովումը և ժամանակացույցը

46. 2017 թվականին տեղագրական քարտեզագրական բնագավառում նախատեսվող աշխատանքների ժամանակացույցն ըստ ծավալների, իրականացման ծախսերի և ժամկետների տրված է աղյուսակ 3-ում:

Ժամանակացույց

2017 թ. տեղագրական քարտեզագրության բնագավառում նախատեսվող աշխատանքների

աղյուսակ 3

Հ / Հ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը /դրամ/	Գումարը /հազ.դրամ/	I եռամսյակ		Կիսամյակ		9 ամիս		Տարի	
						ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Տեխնիկական նախագծի կազմում	նախ.	1	595,059	595.1	1	595.1	1	595.1	1	595.1	1	595.1
2	Օդալուսանկարների հիման վրա 1:2000 մ-բի հատակագծերի գրասենյակային վերծանում - Սպիտակ -744.51 Սևան-1160.0հա	հա	1,904.51	5,290	10,074.9	300.0	1,587.0	1,500	7,935.0	1,904.51	10,074.9	1,904.51	10,074.9
3	Օդալուսանկարների հիման վրա 1:2000 մ-բի հատակագծերի դաշտային վերծանում	հա	1,904.51	10,099	19,233.6	200.0	2,019.8	900	9,089.1	1,600.0	16,158.4	1,904.51	19,233.6
4	Տեղագրական հատակագծերի ստեղծում	հա	1,904.51	12,268.4	23,365.3			900	11,041.6	1,600.0	19,629.4	1,904.51	23,365.3
5	Տեղագրական հատակագծերի համար անհրաժեշտ տվյալների հավաքագրում և ներմուծում տվյալների բազա	տարր	57,135.3	173	9,884.4			27,000	4,671.0	48,000.0	8,304.0	57,135.3	9,884.4
6	1:10000 և 1:25000 մասշտաբների տեղագրական քարտեզների տեղափոխում ԵՏՀ միջավայր ArcGis ծրագրային փաթեթում	թերթ	300.0	61,863	18,558.9	40.0	2,474.5	140	8,660.8	240.0	14,847.1	300.0	18,558.9
7	Տեխնիկական հաշվետվության կազմում	հաշվետվ	1	460,522	460.5				0.0		0.0	1.0	460.5
	Ընդամենը				82,172.7		6,676.4		41,992.5		69,608.8		82,172.8

IV. ԹԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Բնագավառի նկարագրությունը և հիմնական խնդիրները

47. Աշխարհի գրեթե բոլոր երկրներում թեմատիկ քարտեզագրությունը դիտարկվում է որպես պետական նշանակության ոլորտ: Դա ամրագրված է նաև «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի է/կետում: Պետական նշանակության թեմատիկ քարտեզագրության հրատարակումները հանդիսանում են որպես պաշտոնական նյութ, որոնց վրա կարելի է հղում կատարել և օգտագործել հավաստի տեղեկատվություն ստանալու համար:

48. Այդ աշխատանքների շարքին են պատկանում հիմնարար ատլասները /Ազգային ատլաս, Աշխարհի Մեծ ատլաս/ ինչպես նաև կրթական համակարգի համար նախատեսված հավաստի նյութ պարունակող ուսումնական քարտեզներն ու ատլասները:

2. Աշխատանքների իրականացման նպատակը

49. Բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքում նախկինում հրատարակվել են Հայաստանի Ազգային ատլասի Ա և Բ հատորները, ինչպես նաև 32 անվամբ ուսումնական քարտեզներ, որոնք անվճար տրամադրվել են Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դպրոցներին: Նկատի ունենալով աշխարհի տարբեր երկրներում Հայաստանի Ազգային ատլասի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրությունը և այն հանգամանքը, որ Հայաստանի Ազգային ատլասը ԱՊՀ երկրներից առաջիններից է ավարտուն տեսքով հրատարակվել, նախատեսվում է հրատարակել նաև Ատլասի անգլերեն երկհատորյակը և ռուսերեն լեզվով մեկհատորյակը:

50. 2014 թվականին ավարտվել են Հայաստանի Ազգային ատլասի անգլերեն տարբերակի Ա հատորի ստեղծման աշխատանքները: Իսկ 2015-2017 թվականներին նախատեսվում է ավարտել նաև Հայաստանի Ազգային ատլասի անգլերեն լեզվով Բ հատորի նախապատրաստման աշխատանքները:

51. 2017 թվականին նախատեսվում է նախապատրաստել և հրատարակել 5 անվանամբ ուսումնական քարտեզներ, որոնք նույնպես նախատեսված են կրթական համակարգի, ինչպես նաև պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների համար:

3. Աշխատանքների իրականացման միջոցառումները

52. 2017 թվականին նախատեսվում է ավարտել Հայաստանի Ազգային ատլասի Բ հատորի անգլերեն լեզվով տարբերակի նախապատրաստման և հրատարակման աշխատանքները: Ելնելով միջոցների արդյունավետ օգտագործումից և ստեղծվելիք Ատլասի օգտագործման հարմարավետությունից նպատակահարմար է Ազգային ատլասի ռուսերեն տարբերակը հրատարակել մեկ հատորով, որում կներառվեն Հայաստանի Ազգային ատլասի Ա և Բ հատորներից

վերցրած առավել կարևորագույն թեմաները: Նախապատրաստման աշխատանքներն իրանացվելու են այն սկզբունքով, որ երկհատորյակից ընտրվելու են գիտականորեն առավել կարևորագույն նշանակություն ունեցող 220 էջ քարտեզներ, տեքստային մասեր, աղյուսակներ և լուսանկարներ: Քարտեզները ստեղծվելու են մի քանի նույն թեմային վերաբերվող քարտեզներից՝ վերախմբավորման և ընդհանրացման միջոցով: Այնուհետև. այս ընտրված և հաստատված նյութը թարգմանելուց, խմբագրելուց և սրբագրելուց հետո 2019 թվականին կհանձնվի հրատարակման:

4. Ծրագրի իրականացումից ակնկալող արդյունքները

53. Աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ հետևյալը՝

ա/ Հայաստանի Ազգային ատլասի անգլերեն լեզվով տարբերակի 13 էջ և էլեկտրոնային տարբերակը:

բ/ Հայաստանի Ազգային ատլասի ռուսերեն լեզվով թարգմանված, խմբագրված և ձևավորած 80 էջ,

գ/ 5 ուսումնական քարտեզ՝ 2000-ական օրինակից:

5. Ծրագրի իրականացման ֆինանսական ապահովումը և ժամանակացույց:

54. Թեմատիկ քարտեզագրության բնագավառում 2017 թվականին նախատեսվող աշխատանքների ժամանակացույցն ըստ ծավալների, իրականացման ծախսերի և ժամկետների տրված է աղյուսակ 4-ում:

Ժամանակացույց
Թեմատիկ քարտեզագրության բնագավառում 2017 թվականին նախատեսվող աշխատանքների

աղյուսակ 4

	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը /դրամ/	Գումարը /հազ.դրամ/	I եռամսյակ		Կիսամյակ		9 ամիս		Տարի	
						ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը
1	Հայաստանի Ազգային ատլասի անգլերեն տարբերակ Բ հատոր												
	ա/ նյութի թարմացումում	էջ	13	26,630	346.2	7	186.4	13	346.2	13	346.2	13	346.2
	բ/ խմբագրում	էջ	13	30,194	392.5	7	211.4	13	392.5	13	392.5	13	392.5
	գ/ քարտեզների ձևավորում	էջ	13	42,455	551.9	7	297.2	13	551.9	13	551.9	13	551.9
	դ/ տեքստային ձևավորում	էջ	51	23,158	1,181.0	10	231.6	51	1,181.0	51	1181.0	51	1,181.0
	Ընդամենը				2,471.6		926.5		2,471.6		2,471.6		2,471.6
2	Հայաստանի Ազգային ատլասի ռուսերեն տարբերակ 1 հատորով												
	ա/թարմացում և թարգմանություն	էջ	80	40,000	3,200.0			10	400.0	60	2400.0	80	3,200.0
	բ/ էջերի միավորում և խմբագրում	էջ	80	40,000	3,200.0			10	400.0	60	2400.0	80	3,200.0
	գ/ քարտեզների ձևավորում	էջ	80	55,000	4,400.0			10	550.0	60	3300.0	80	4,400.0
	Ընդամենը				10,800.0				1,350.0		8100.0		10,800.0

3	Ուսումնական քարտեզներ												
	ա/խմբագրում	քարտեզ	5	200,000	1,000.0			5	1,000.0	5	1000.0	5	1,000.0
	գ/քարտեզների ձևավորում	քարտեզ	5	200,000	1,000.0			5	1,000.0	5	1000.0	5	1,000.0
	դ/հրատարակում 2000-ական	օրինակ	10000	350	3,500.0					10000	3,500.0	10000	3,500.0
	Ընդամենը				5,500.0				2,000.0		5,500.0		5,500.0
	Ա Մ Բ Ո Ղ Ջ Ը				18,771.6		926.5		5,821.6		16,071.6		18,771.6

V. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

1. Բնագավառի նկարագրությունը և հիմնական խնդիրները

55. Ծրագրի հիմնական նպատակն է հանդիսանում «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան ոլորտի զարգացման և արդյունավետության բարձրացման համար Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի վարումը, ՀՀ սահմաններից դուրս գտնվող աշխարհագրական անվանումների տեղեկատվական բանկի ստեղծումը և տարբեր տեղեկատուների ու բառարանների հրատարակումը: Այս բնագավառում ՀՀ կառավարության 09.06.2001 թվականի N502 որոշմամբ հաստատված «ՀՀ աշխարհագրական անվանումների հաշվառման ու գրանցման, պետական քարտադարանի ստեղծման և վարման» կարգի պահանջներին համապատասխան 2002-2007 թվականներին ավարտվել են Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքները, միաժամանակ ստեղծվել է աշխարհագրական անվանումների պետական քարտադարանը, որը պարբերաբար թարմացվում է: 2002-2014 թվականների ընթացքում կատարվել են ՀՀ տարածքի ավելի քան 41000 աշխարհագրական օբյեկտների անվանումների հաշվառման աշխատանքներ: ՀՀ կառավարության կողմից ստեղծված ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների մասնագիտական հանձնաժողովի աշխատանքի արդյունքում ՀՀ կառավարության կողմից հաստատվել են ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի աշխարհագրական օբյեկտների անվանումները: Աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի թարմացման արդյունքում 2009-2014 թվականներին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է համապատասխանաբար մոտ 3200 նոր աշխարհագրական օբյեկտների անվանումներ: Գրանցվել է ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի աշխարհագրական օբյեկտների ավելի քան 41 հազար անվանում: Անվանափոխվել են ՀՀ 59 բնակավայրեր, նախատեսվում է անվանափոխել ևս 21 բնակավայր: Այս բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքում հրատարակվել են ՀՀ մարզերի աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատուները՝ գազետիրները, որոնցում գետեղված են ՀՀ մարզերի տարածքներում գտնող աշխարհագրական օբյեկտների անվանումները: Հրատարակվել է նաև «ՀՀ բնակավայրերի բառարան»-ը, «ՀՀ ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների համառոտ տեղեկատու-բառարան»-ը, «Աշխարհագրական անվանումների հայերեն լեզվով էկզոնիմների ցանկ»-ը, «ՀՀ վարչատարածքային բաժանման տեղեկատուն», «Աշխարհի պետությունների համառոտ տեղեկատու բառարանը», «Աշխարհի խոշորագույն քաղաքների համառոտ տեղեկատու-բառարանը», «ՀՀ պատմաճարտարապետական հուշարձանների համառոտ տեղեկատուն» և «ՀՀ լեռնագրական օբյեկտների համառոտ տեղեկատուն»: Այս բոլոր տեղեկատուները բաժանվել են ՀՀ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ պետական կազմակերպություններին:

56. 2017 թվականին շարունակվելու են ՀՀ աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի թարմացման և վարման աշխատանքները, ինչպես նաև տարաբնույթ տեղեկատուների նախապատրաստման և հրատարակման աշխատանքները:

2. Աշխատանքների իրականացման նպատակը

57. Սույն ծրագրով նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի վարման և թարմացման աշխատանքներ, որը կրում է շարունակական բնույթ և բխում է «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներից: Վարման աշխատանքների ժամանակ շարունակվելու է 2007 թվականի հունիսի 15-ին կայացած ԱՊՀ մասնակից երկրների միջպետական խորհրդի XXVI նստաշրջանում ընդունված որոշման շրջանակներում աշխարհագրական անվանումների տեղեկատվության փոխանակման գործընթացը:

58. 2002 թվականից աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի հաշվառման աշխատանքները իրականացվել են 1:25 000 մասշտաբի թղթային քարտեզների վրա: Տարիների ընթացքում վերջիններս մաշվել են և դարձել են անօգտագործելի: Այդ պատճառով 2016 թվականից բոլոր քարտեզագրական նյութերը տեղափոխված են էլեկտրոնային միջավայր և հետագայում թարմացման և վարման աշխատանքները կիրականացվեն էլեկտրոնային քարտեզի վրա, որն անհամեմատ հարմար է օգտագործման համար:

59. 2017 թվականին նախապատրաստվող և հրատարակվող տեղեկատուների անհրաժեշտությունը բխում է «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի և 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից և կարևոր նշանակություն ունի լրատվական, գիտական, կրթական, քարտեզագրական և այլ ոլորտներում:

60. Դրանց անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ վերջին տարիների ընթացքում շատացել է հայալեզու հրատարակչական արտադրանքը, ստեղծվել են նոր հեռուստա- և ռադիոընկերություններ, գրահրատարակչություններ, թերթեր և ամսագրեր, որոնց կողմից ներկայացվող նյութերում տեղ են գտնում բազմաթիվ աշխարհագրական անվանումներ: Անճշտություններից և կոպիտ վրիպակներից խուսափելու նպատակով շատ կարևոր է ունենալ հավաստի և պաշտոնական տեղեկատու, որոնց միջոցով կներկայացվեն աշխարհագրական անվանումների ճշգրիտ գրելաձևերը:

61. ՀՀ մարզերի աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատուն՝ գազետիքը հրատարակվել էր 2007 թվականին, որից հետո ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանումները ավելացել են մոտ 2000-ով, այդ իսկ պատճառով 2016 թվականին գազետիքը թարմացվել և վերահրատարակվել է արդեն անգլերեն լեզվով:

62. Աշխատանքների իրականացման արդյունքում նախապատրաստված և հրատարակված տեղեկատուները նախատեսվում է ըստ անհրաժեշտության տրամադրել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև համապատասխան պետական կազմակերպություններին, կրթական և գիտական հիմնարկներին:

3. Աշխատանքների իրականացման միջոցառումները

63. 2017 թվականի ընթացքում ոլորտի կարևորագույն միջոցառումներից ՀՀ աշխարհագրական անվանումների քարտադարանի վարումը և թարմացումը, որը կրում է շարունակական բնույթ: Այն իր մեջ ներառում է աշխարհագրական անվանումների տեղեկատվական բանկի տվյալների անընդհատ թարմացում և լրացում: 2017 թվականից այդ աշխատանքներն իրականացվում են էլեկտրոնային միջավայրում՝ 1:25000

տեղագրական բոլոր քարտեզների jpg. կամ pdf. տարբերակների և հաշվառման ձևաթղթերի էլեկտրոնային /excel/ ֆայլերի վրա:

64. 2017 թվականի ընթացքում շարունակվելու է նաև մեծ պահանջարկ ունեցող տարաբնույթ տեղեկատուների ստեղծման և հրատարակման աշխատանքները, այդ թվում ՀՀ ջրագրական աշխարհագրական օբյեկտների համառոտ տեղեկատու-բառարանը: Հայաստանի Հանրապետությունում նշված և նախկինում հրատարակված տեղեկատու-բառարանները հրատարակվում են առաջին անգամ:

65. 2017 թվականին նախապատրաստվելու և հրատարակվելու է Եվրոպայի խոշոր ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարանը:

4. Աշխատանքների իրականացումից ակնկալվող արդյունքները

66. 2017 թվականին նախատեսվող աշխատանքների շնորհիվ ակնկալվում է ունենալ հետևյալ արդյունքները՝

- 1) թարմացված ՀՀ աշխարհագրական անվանումների պետական քարտադարանը,
- 2) հաշվառված աշխարհագրական օբյեկտների անվանումներով նյութեր և էլեկտրոնային տեղագրական քարտեզներ,
- 3) ՀՀ ջրագրական աշխարհագրական օբյեկտների համառոտ տեղեկատու-բառարանները,
- 4) Եվրոպա, խոշոր ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարանը:

5. Աշխատանքների իրականացման ֆինանսական ապահովումը և ժամանակացույցը

67. 2017 թվականին աշխարհագրական անվանումների բնագավառում նախատեսվող աշխատանքների ժամանակացույցն ըստ ծավալների, իրականացման ծախսերի և ժամկետների տրված է աղյուսակ 5-ում:

Ժամանակացույց
2017 թվականին աշխարհագրական անվանումների բնագավառում նախատեսվող աշխատանքների

աղյուսակ 5

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը /դրամ/	Գումարը /հազ.դրամ/	I եռամսյակ		Կիսամյակ		9 ամիս		Տարի	
						ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	ՀՀ աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքների՝												
	ա/ թարմացում	ամիս	7	400,000.0	2,800.0	1	400.0	3	1,200.0	5	2,000.0	7	2,800.0
	բ/ քարտադարանի վարում	ամիս	10	240,000.0	2,400.0	1	240.0	4	960.0	7	1,680.0	10	2,400.0
	Ընդամենը				5,200.0		640.0		2,160.0		3,680.0		5,200.0
2	ՀՀ ջրագրական օբյեկտների անվանումների համառոտ տեղեկատու-բառարան												
	ա/ նախապատրաստում	օբյեկտ	500	7,200.0	3,600.0	50	360.0	250	1,800.0	450	3,240.0	500	3,600.0
	բ/ հրատարակում	օրինակ	300	1,500.0	450.0		0.0		0.0		0.0	300	450.0
	Ընդամենը				4,050.0		360.0		1,800.0		3,240.0		4,050.0

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
3	Եվրոպայի խոշոր ֆիզաշխարհագրակ ան օբյեկտների տեղեկատու- բառարան												
	ա/ նախապատրաստու մ	օբյեկտ	300	7,200.0	2,160.0		0.0	100	720.0	200	1,440.0	300	2,160.0
	բ/ հրատարակում	օրինակ	300	1,500.0	450.0		0.0		0.0		0.0	300	450.0
	Ընդամենը				2,610.0		0.0		720.0		1,440.0		2,610.0
	Ա Մ Բ Ո Ղ Ջ Ը				11,860.0		1,000.0		4,680.0		8,360.0		11,860.0

VI. ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

68. Հայաստանի Հանրապետության տարածքում կադաստրային քարտեզագրման աշխատանքները հիմնականում իրականացվել են 1998-2004 թվականների ընթացքում՝ հանութագրման ավանդական տարբեր եղանակներով (մենզուլային, տախտոմետրային):

69. Առաջին տարիներին կադաստրային քարտեզները ստեղծվում և պահպանվում էին ավանդական թղթային տարբերակով, որը ժամանակի ընթացքում դեֆորմացվելով տալիս էր էական սխալներ և անճշտություններ: Մի շարք համայնքներում դա արդեն առաջացնում է լուրջ խնդիրներ կապված գույքի տեղադիրքի և չափերի հետ:

2. Ծրագրի իրականացման նպատակը

70. Ներկայացվող ծրագրի հիմնական նպատակն է հանդիսանում վերջին տարիներին նոր տեխնոլոգիաների կիրառմամբ որոշ համայնքների կադաստրային քարտեզներում հայտնաբերված անճշտությունների և սխալների վերացումը:

71. Քանի որ հիմնականում թվային տեղագրական քարտեզները ստեղծվել են ՀՀ համայնքների կադաստրային քարտեզագրման աշխատանքներն ավարտելուց հետո տարբեր տարիների ընթացքում հանութագրման տարբեր եղանակներով ստացված նյութերի հիման վրա, այդ իսկ պատճառով նախկինում էլեկտրոնային եղանակով հնարավոր չէր կատարել նշված երկու քարտեզների համադրման աշխատանքները: Ներկայիս տեխնիկական հնարավորությունները թույլ են տալիս այդ քարտեզները միմյանց հետ համադրել, որի արդյունքում ի հայտ են գալիս գրեթե բոլոր շեղումները, որոնք հետևանք են վերը նշված պատճառների: Այսօր տարբեր խնդիրների լուծման համար շատ հաճախ անհրաժեշտություն է առաջանում այդ երկու քարտեզներում առկա տվյալները համադրել: Օրինակ՝ քանի որ հողամասերի իրավական սահմանները արտահայտվում են կադաստրային քարտեզներում, իսկ տարբեր տեսակի նախագծերը և գլխավոր հատակագծերը կազմվում են տեղագրական քարտեզների հիմքի վրա, ապա անհրաժեշտ է, որ այդ երկու քարտեզները միմյանց հետ լինեն համատեղելի:

3. Ծրագրի իրականացման միջոցառումները

72. Սույն ծրագրով նախատեսվում է կատարել ՀՀ մարզերի համայնքների հանութագրման աշխատանքներ, այդ թվում՝ դաշտային չափագրում և գեոդեզիական կետերին կապակցում, չափագրման արդյունքների կամերալ մշակում, հավասարակշռում, կորոդինատների հաշվարկում, կատալոգների կազմում, տեղագրական և կադաստրային քարտեզների ու հատակագծերի համադրում, հիմք ընդունելով հանրապետությունում բազային հանդիսացող 1:10000 մասշտաբի տեղագրական օրթոֆոտոհատակագծերը, քարտեզները և 2014 թվականին իրականացված ՀՀ տարածքի օդալուսանկարահանում 10 սմ և 20 սմ թույլատրելիությամբ օդալուսանկարահանման աշխատանքները:

4. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները

73. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում կունենանք ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ, Երասխահուն, Մուսալեռ, Փշատավան, ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան, ՀՀ Արագածոտնի մարզի Վերին Սասունիկ, Ագարակ, Գեղարոտ, ՀՀ Գեղարքունիքի մարզի ք. Գավառ /Հացառատ թաղամաս/, Ակունք, Գեղամավան, ՀՀ Կոտայքի մարզի Վ. Պտղնի, Բալահովիտ, Քարաշամբ, Մայակովսկի, ՀՀ Վայոց Ձորի մարզի Ագարակաձոր, ՀՀ Տավուշի մարզի ք.Դիլիջան համայնքների թարմացված և ուղղված կադաստրային քարտեզներ:

5. Աշխատանքների իրականացման ֆինանսական ապահովումը և ժամանակացույցը

74. 2017 թվականին նախատեսվող ՀՀ մարզերի համայնքների կադաստրային քարտեզների թարմացման աշխատանքների ժամանակացույցն ըստ ծավալների, իրականացման ծախսերի և ժամկետների տրված է աղյուսակ 6-ում:

Ժամանակացույց
2017 թվականին համայնքների կադաստրային քարտեզների թարմացման աշխատանքների

աղյուսակ

6

Հ/հ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը /դրամ/	Գումարը /հազ.դրամ /	1-ին եռամսյակ		1 կիսամյակ		9 ամիս		Տարի	
						ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը
1	ՀՀ համայնքների կադաստրային քարտեզների թարմացման աշխատանքներ	հա	48,820	3,513.23	171,515.9	1,000	3,513.2	21,000	73,777.8	41,387.73	145,404.6	48,820	171,515.9
	Ընդամենը				171,515.9		3,513.2		73,777.8		145,404.6		171,515.9

VI. ՀՀ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

75. 2011 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը»: Դրանով իսկ ՀՀ կառավարությունը հաստատեց, որ վարչատարածքային բարեփոխումներն անհրաժեշտ են՝ համայնքների զարգացման շարունակականության ապահովման, համայնքի կողմից առավել որակյալ և մատչելի ծառայությունների մատուցման, խոշորացված համայնքների միավորված ռեսուրսների (մարդկային, ֆինանսական, հողային և այլն) առավել արդյունավետ օգտագործման տեսանկյունից: Այնուհետ, համայնքների խոշորացման գործընթացի անհրաժեշտությունը կարևորվեց նաև այլ փաստաթղթերում, մասնավորապես, ՀՀ կառավարության տարեկան ծրագրերում, Կայուն զարգացման ծրագրում, ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում և այլն:

76. 2016 թվականից իրականացվում է ՀՀ համայնքների խոշորացման ծրագիր և արդեն կազմավորվել են 16 խոշորացված համայնքներ, որոնց կազմը և սահմանների նկարագիրը ամրագրված է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում, սակայն այդ համայնքները չունեն միասնական կադաստրային և հողաշինարարական հատակագծեր, ինչպես նաև հողային հաշվեկշիռ:

77. Հողի սեփականաշնորհումից հետո հանրապետության բազմաթիվ համայնքներում, հատկապես լեռնային, բարձրլեռնային և սահմանամերձ, հողային պաշարներն օգտագործվում են ոչ լիարժեք, շատ համայնքներում գյուղատնտեսական նշանակության հողերի մի մասը ընդհանրապես չի օգտագործվում, պատճառաբանելով ցածր բերքատվությունը, հեռավորությունը բնակավայրերից, ճանապարհների և տեխնիկայի բացակայությունը, մեծ թեքությունները և այլն: Հատկապես գյուղատնտեսական նշանակության հողերը շրջանառության մեջ վերադարձնելու համար խիստ կարևոր է այդ հողերի սահմանազատումը, դրանց վիճակի ուսումնասիրությունը և հետագա

օգտագործման վերաբերյալ գիտականորեն հիմնավորված տարբերակների մշակումը:

Նպատակը

78. ՀՀ խոշորացված համայնքներին ապահովել կադաստրային և հողաշինարարական հատակագծերով, այդ համայնքներին տրամադրել ճշտված հողային հաշվեկշիռ, վերհանել հողերի օգտագործման ոլորտում առկա խնդիրները և առաջադրել դրանց լուծման տարբերակներ:

Խնդիրները և միջոցառումները

79. ՀՀ խոշորացված համայնքները չունեն մեկ ընդհանուր մասշտաբի բերված կադաստրային և հողաշինարարական հատակագծեր, ճշտված հողային հաշվեկշիռ և համապատասխան տեղեկատվություն հողօգտագործման բնագավառում առկա խնդիրների մասին, հետևաբար անհրաժեշտ է.

1. Կազմել ՀՀ խոշորացված համայնքների 1:10 000 կամ 1:25 000 մասշտաբի կադաստրային և հողաշինարարական հատակագծերը

2. Կազմել ՀՀ խոշորացված համայնքների հողային հաշվեկշիռները:

3. Վերհանել ՀՀ խոշորացված համայնքներում հողօգտագործման բնագավառում առկա խնդիրները և առաջադրել դրանց լուծման տարբերակներ:

Աշխատանքների կատարման փուլերը

80. Նախապատրաստական աշխատանքներ

- հավաքագրել գոյություն ունեցող հողաշինարարական տարբեր մասշտաբների (1:2000, 1:5000, 1:10 000, 1:25 000) քարտեզագրական (հանութագրման) նյութերը.

- հավաքագրել վերջին տարիներին կատարած կադաստրային տեղագրական և օդալուսանկարչական հանութագրման նյութերը.

- վերհանել վերջին տարիներին ՀՀ օրենքները և կառավարության որոշումները՝

ա/ համայնքների վարչական սահմանների փոփոխությունների հաստատման մասին.

բ/ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողերից համայնքներին հատկացված հողերի մասին.

- հավաքագրել տվյալներ չօգտագործվող և անարդյունավետ օգտագործվող հողերի վերաբերյալ:

81. Դաշտային աշխատանքներ

- տեղում ուսումնասիրել համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման վիճակը, սահմանազատել չօգտագործվող և անարդյունավետ օգտագործվող հողերը:

82. կամերալ աշխատանքներ

- օգտագործելով հավաքագրված նյութերը և դաշտային հետազոտությունների արդյունքները տարբեր մասշտաբի կադաստրային և հողաշինարարական հատակագծերը համադրել և կազմել.

ա) համայնքի 1:10 000 կամ 1:25 000 մասշտաբի հողաշինարարական և կադաստրային հատակագծերը

բ) համայնքի հողային հաշվեկշիռը

- բազմացնել կազմված հատակագծերը համայնքներին տրամադրելու համար:

7. Ակնկալվող արդյունքները

83. Ծրագրով նախատեսված աշխատանքների արդյունքում համայնքը կունենա հողաշինարարական և կադաստրային քարտեզ, ճշտված հողային հաշվեկշիռ և գիտականորեն հիմնավորված առաջարկություններ հողերի օգտագործման ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ, որոնք կօգտագործվեն հողային հարաբերությունների կարգավորման, համայնքների հեռանկարային սխեմաների և գլխավոր հատակագծերի կազմման, չօգտագործվող և անարդյունավետ օգտագործվող հողերի հետ կապված խնդիրների լուծման համար:

Ժամանակացույց

ՀՀ խոշորացված համայնքների հատակագծերի և հողային հաշվեկշիռների կազմման համար 2017թ. նախատեսվող աշխատանքների ներառյալ ԱԱՀ

աղյուսակ 7

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը /դրամ/	Գումարը /հազ.դրամ/	I եռամսյակ		Կիսամյակ		9 ամիս		Տարի	
						ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Գոյություն ունեցող հողաշինարարական քարտեզագրական նյութերի հավաքագրում և ուսումնասիրում	համայնք	16	34,283.9	548.5	16.0	548.5	16.0	548.5	16.0	548.5	16.0	548.5
2	Համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգագործման վիճակի ուսումնասիրություն	քառ.կմ	5,476.0	2,175.0	11,910			2,200.0	4,785.0	4,400.0	9,570.0	5,476.0	11,910
3	Համայնքների հատակագծերի և հողային հաշվեկշիռների կազմում	համայնք	16	1,080,842	17,293.5			6.0	6,485.1	12.0	12,970.1	16.0	17,293.5
	Ընդամենը				29,752.0		548.5		11,818.6		23,088.6		29,752.0